ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հայաստան

Հայաստան-Թուրքիա երկխոսություն և համագործակցություն

***Ծրագրի նպատակը**՝ ամրապնդել Հայաստանի և Թուրքիայի կառավարական, հասարակական կազմակերպությունների ու մասնավոր հատվածի միջև երկխոսությունը և համագործակցությունը՝ տարածաշրջանում կապեր հաստատելու և պահպանելու հարցում տեղական գործընկերների կարողությունները զարգացնելու միջոցով:*

Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունները պատմական կոնֆլիկտի հետևանքով դեռևս կարգավորված չեն: Դրանք էլ ավելի սրվեցին 1988 թ-ին, երբ Հայաստանի ու Ադրբեջանի միջև սկսվեց Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի շուրջ հակամարտությունը: Արդյունքում Թուրքիան փակեց Հայաստան մտնող բոլոր առևտրային և տրանսպորտային ուղիները: Այդպիսով՝ փակվեց Եվրոպայի հետ առևտրային հիմնական ուղին:

Աշխարհում ընդունված «Հասարակական դիվանագիտություն նախաձեռնությունը, ըստ որի՝ տարածաշրջանում համագործակցություն է հաստատվում հասարակական կազմակերպությունների միջև, հայտնի է որպես կոնֆլիկտների լուծման արդյունավետ միջոց: Հայաստանում և Թուրքիայում քաղաքացիական որոշ խմբեր, գործարարներ, տեղական կառավարման ներկայացուցիչներ ու լրագրողներ կապեր են հաստատել միմյանց հետ և իրականացրել համատեղ ծրագրեր: Այնուամենայնիվ, նման նախաձեռնություններն այնքան էլ շատ չեն:

2005 թ. Եվրասիա համագործակցություն հիմնադրամը մեկնարկեց «Հայաստան-Թուրքիա տարածաշրջանային երկխոսություն և համագործակցություն ծրագիրը, որը հետամուտ է կարգավորելու երկու երկրների միջև հարաբերությունները: Ծրագիրն ուղղված է կառավարական, հասարակական կազմակերպությունների և գործարար շրջանակների կարողությունների զարգացմանը՝ տարածաշրջանում համագործակցություն հաստատելու համար: Աջակցություն կտրամադրվի այն ծրագրերին, որոնք միտված են «Հասարակական դիվանագիտության նախաձեռնությունների հնարավոր օգուտների մասին իրազեկության բարձրացմանը, սահմանի բացման հետևանքների մասին հանրության իրազեկմանը և տարածաշրջանային կապերի հաստատմանը: Աջակցելով նմանօրինակ նախաձեռնություններին՝ հնարավոր կլինի արագ ընթացք տալ Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորմանը:

Հայ-թուրքական հարաբերությունների մասին իրազեկում

2006 թ-ին Եվրասիա համագործակցություն հիմնադրամն աջակցեց մի քանի ուսումնասիրությունների անցկացմանը՝ հայ-թուրքական հարաբերությունների շուրջ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների ու հանրության իրազեկությունը բարձրացնելու նպատակով: «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն հասարակական կազմակերպությունն անցկացրեց Հայաստան-Թուրքիա «Հասարակական դիվանագիտության լավագույն ծրագրերի շուրջ ուսումնասիրություն: Եվրասիա համագործակցություն հիմնադրամը նաև աջակցություն տրամադրեց «Հայկական միջազգային տնտեսական հետազոտությունների խմբին՝ անցկացնելու հետազոտական երկու ծրագրեր: Այդ ծրագրերն ուսումնասիրում են հայ-թուրքական սահմանի բացման սոցիալ-տնտեսական հետևանքները և տեղական իշխանությունների արձագանքն այդ ուղղությամբ:

2007 թ. սկզբին Երևան քաղաքում կայացած միջազգային գիտաժողովի և Հայաստանի մարզերում, Երևան, Անկարա և Ստամբուլ քաղաքներում անցկացված «Կլոր սեղան քննարկումների ժամանակ ներկայացվեցին ուսումնասիրությունների արդյունքները: «Կլոր սեղան քննարկումների նպատակն էր տարածել այդ ուսումնասիրությունների արդյունքները հանրության ավելի լայն շրջանակներին, բացահայտել այն հնարավոր ոլորտները, որոնց ուղղությամբ կարելի է հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների ու տեղական իշխանությունների միջև համագործակցություն հաստատել, ինչպես նաև հստակեցնել Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ծրագրային մոտեցումն այդ ոլորտների առնչությամբ:

Աջակցություն տարածաշրջանային ծրագրերին

2007 թ. սեպտեմբերին Եվրասիա համագործակցություն հիմնադրամն իր աջակցությունն է ցուցաբերել յոթ հասարակական կազմակերպություններին և լրատվական ընկերություններին՝ համագործակցություն հաստատելու թուրքական կողմի համապատասխան նեկայացուցիչների հետ և իրականացնելու տարածաշրջանային ծրագրեր: Համագործակցության այդ ծրագրերն ընդգրկում են ինչպես մշակութային և երիտասարդական փոխանակման ծրագրեր, այնպես էլ լրատվական տարածաշրջանային ծրագրեր:

Եվրասիա հիմնադրամը մասնավոր կառավարվող, ոչ շահութաբեր կազմակերպություն է, որին աջակցում են ԱՄՆ կառավարությունը և այլ դոնորներ: 1992 թ-ից ի վեր Եվրասիա հիմնադրամը ներդրել է ավելի քան 370 միլիոն ԱՄՆ դոլար և իրականացրել ավելի քան 8400 դրամաշնորհային և տեխնիկական աջակցության ծրագրեր Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Ղազախստանում, Ղրղզստանի Հանրապետությունում, Մոլդովայում, Ռուսաստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում, Ուկրաինայում և Ուզբեկստանում: Սկսած 1992 թ-ից՝ Եվրասիա հիմնադրամը Հայաստանում ներդրել է ավելի քան 30 միլիոն ԱՄՆ դոլար:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը Եվրասիա հիմնադրամի հետևորդ կազմակերպությունն է:

Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի նվիրատվության շնորհիվ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, որի բովանդակության համար պատասխանատու է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

Համալրել, ընձեռել, հզորացնել

Հայ-թուրքական երիտասարդական ակումբ
Հայկական կողմի մասնակից՝ «Երիտասարդական ակադեմիա հ/կ
Թուրքական կողմի մասնակից՝ «Քութայա երիտասարդական ընկերակցություն և երիտասարդ Գուրու ակադեմիա

Հայ և թուրք երիտասարդների միջև երկխոսություն և համագործակցություն հաստատելու նպատակով ստեղծվելու է հայ-թուրքական վիրտուալ երիտասարդական ակումբ: Կստեղծվեն համատեղ ղեկավարվող վեբ-ռեսուրսներ, այդ թվում՝ էլեկտրոնային առցանց (online) ֆորումներ և տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև եռամսյակը մեկ լույս ընծայվող էլեկտրոնային թերթ՝ «Ակումբային զոտի» վերտառությամբ: Կկազմակերպվեն համատեղ կլոր-սեղան քննարկումներ: Կստեղծվի նաև երկկողմանի թիմ՝ բաղկացած ծրագրավորողներից և համակարգչային չիպերի դիզայնով զբաղվող մասնագետներից:

Երաժշտական կամուրջ
Հայկական կողմի մասնակից՝ «Կոմիտասի պետական քառյակ» հ/կ
Թուրքական կողմի մասնակից՝ «Օրիոն Փրոդաքշն», «ԹիԴիԱյ Մենեջմենթ» և թուրք-հայկական բիզնեսի զարգացման խորհուրդ (TABDC)

Հայաստանի և Թուրքիայի միջև երկխոսություն և համագործակցություն հաստատելու նպատակով Եվրասիա համագործակցություն հիմնադրամը աջակցելու է «Կոմիտասի պետական քառյակի» և «Բոսֆորի քառյակի» մասնակցությամբ համերգների կազմակերպմանը Թուրքիայում և Հայաստանում: Կկազմակերպվեն նաև փոխայցեր հայ և թուրք արվեստագետների միջև:

Լուսանկարչական կամուրջ
Հայկական կողմի մասնակից՝ «Պատկեր» ՍՊԸ
Թուրքական կողմի մասնակից՝ «Նար» լուսանկարչական գործակալություն

Եվրասիա համագործակցություն հիմնադրամն աջակցում է հայ և թուրք արհեստավարժ լուսանկարիչներին և սահմանամերձ համայնքների բնակիչներին՝ հանդուրժողականություն և համագործակցություն հաստատելու նպատակով: Դրամաշնորհառուն և իր թուրք գործընկերը կկազմակերպեն հայ և թուրք լուսանկարիչների փոխայցեր Հայաստան և Թուրքիա, կտպագրեն և կտարածեն տպագիր և էլեկտրոնային լուսանկարչական նյութեր:

Հայաստան-Թուրքիա երկխոսություն՝ եվրոպական ինտեգրացիայի ներքո
Հայկական կողմի մասնակից՝ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ
Թուրքական կողմի մասնակից՝ Ստամբուլի Սաբանսի համալսարանի քաղաքական կենտրոն

Հիմնադրամն աջակցում է երկու երկրների երիտասարդ ակտիվիստների և փորձառու մասնագետների միջև կարճաժամկետ ինտելեկտուալ դաշտի ստեղծմանը: Ծրագրի գործընկերները կանցկացնեն հասարակական կարծիքի ուսումնասիրություն Հայաստանում և Թուրքիայում, պարզելու եվրոինտեգրման գործընթացներում հասարակության ավելի լայն շերտերի կարծիքը և հայ-թուրքական երկխոսության ու համագործակցության բարելավման հնարավորությունները: Այս ամենին կհետևեն կլոր-սեղան քննարկումներն ու թոք-շոուները, որոնց կմասնակցեն Հայաստանից և Թուրքիայից հրավիրված քաղաքագետներ:

Իմ սիրելի եղբայր
Հայկական կողմի մասնակից՝ «Ազգ» օրաթերթ
Թուրքական կողմի մասնակից՝ Պն. Օսման Կոկեր, թուրք գիտնական, հրատարակիչ

«Ազգ»-ը հայերեն կթարգմանի, կտպագրի և Հայաստանի ողջ տարածքով կտարածի մեկդարյա հնություն ունեցող Օսմանյան կայսրության նամականիշները, որոնք պատկերում են հայ ժողովրդի կյանքի դրվագներ Օսմանյան կայսրության գահակալության ժամանակ: Կկազմակերպվեն մի շարք միջոցառումներ՝ ալբոմը և ծրագիրը ներկայացնելու նպատակով:

Հայ-թուրքական թիմային զեկուցում
Հայկական կողմի մասնակից՝ «Երևանի մամուլի ակումբ»
Թուրքական կողմի մասնակից՝ «Արի» շարժում

Ծրագրի նպատակն է աջակցել ԶԼՄ-ների կողմից հայ-թուրքական հարաբերություններին առնչվող մի շարք հարցերի ավելի անաչառ լուսաբանմանը: Ստամբուլում ծրագրի գործընկերները երկու երկրների լրագրողների համար կանցկացնեն նախապատրաստական դասընթացներ՝ նվիրված անկողմնակալ և հետաքննական զեկույցներ պատրաստելուն: Վերլուծական նյութերը և հետաքննական զեկույցները կքննարկվեն Երևանում կայանալիք երկօրյա համաժողովի ընթացքում:

Հայաստանի և Թուրքիայի համայնքների միջև կապերի հաստատում
Հայկական կողմի մասնակից՝ Գլոբալիզացիայի և մարզային համագործակցության վերլուծական կենտրոն
Թուրքական կողմի մասնակից՝ պրն. Սուաթ Կինիկլիօղլու, Միացյալ Նահանգների Մարշալ հիմնադրամի Անկարայի գրասենյակի տնօրեն և տկն. Դիբա Նիգար Գոկսել՝ թուրքական ամսագրի խմբագիր

Եվրասիա համագործակցություն հիմնադրամն աջակցում է երկու երկրների հասարակությունների միջև եվրոինտեգրման և գլոբալ մարտահրավերների ու վտանգների մասին երկխոսության հաստատմանը: Դրամաշնորհառուն և իր գործընկերները վերոնշյալ թեմաներով հարցումներ կանցկացնեն երկու երկրների քաղաքական և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև: Հետազոտության արդյունքները կքննարկվեն Երևանում կայանալիք իրար հաջորդող երկու համաժողովների ժամանակ: Մի շարք հոդվածներ, որոնք կլուսաբանեն հետազոտության և համաժողովների արդյունքները կտպագրվեն հայկական և թուրքական թերթերում:

ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Նունե Սարգսյան
Ինտերնյուս-Հայաստան

Արտաշես Թերզյան
Investment Bank Trust,
National Bank Trust,
Ռուսաստան

Մարգարիտա Փիլիպոսյան
Հայ օգնության ֆոնդ

Դավիթ Հովհաննիսյան
Երևանի պետական համալսարանի մշակույթի և քաղաքակրթության կենտրոն

Արա Համազասպյան
«Իզմիրլյան հիմնադրամի երևանյան գրասենյակ

Արսեն Ղազարյան
Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ

Հասցե՝ 0009, ՀՀ, ք. Երևան, Զարոբյան փ. 56
Հեռ.՝ (374 10) 58 60 95
Ֆաքս՝ (374 10) 58 60 96

info@epfound.am
www.epfound.am